

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան միջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաղողի ջարդելը և ջա-
ջայի մղելը. Նամակ Մօզզոլից. Նիբելին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւ-
քաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ
թիւքաց Հայաստանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՌՆԻ ԶԱՐԴԵԼ ԵՒ ԶԱՋԱՅԻ ՄՁԵԼԸ

Մեր նախորդ յօդուածները նիւթը ընդհանուր
էր, նա վերաբերում էր թէ սև և թէ սպիտակ
խաղողին: Այսուհետև զուգընթացաբար կը խո-
սենք թէ մէկը և թէ միւսը մասին առանձին ա-
ռանձին, ի նկատի ունենալով զանազանութիւն-
ները: Ենթադրենք որ խաղողը քաղած է—այժմ
խնայէ շիրան ստանալ, ինչ գործընկերի միջոցով,
ինչ ձևով: Ահա, մեր արդի յօդուածի նիւթը:

Ընդհանրապէս կովկասում խաղողից շիրա
ստանալու համար մեքենաների չեն դիմում, ինչ-
պէս այդ անում են Եւրոպայում:

Օրինակ, կովկասից այգիտէրը, կամ ռամիկ դի-
նեգորը չը գիտէ թէ ինչ բան է ջարդող մեքե-
նայ, կամ ջարդող չանչանան անող, չը գիտէ
ինչ է նշանակում պրիստուր: Այդ բաները նը-
րանց անծանօթ են:

Երևանի նահանգում խաղողը տրորում են ոտ-
ներով, կալի կամ թէ տալիս մէջ:

Այգիտէրը իր այգում և կամ տանը առանձնա-
պէս մի սենեակ է պարագեցնում խաղողը կտր-
ճօրելու համար. եթէ այդ սենեակը այգիումն է
հնձան է կոչվում: Հնձանը ունենում է մի դուռ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

VII

188.. սեպտեմբերի 18, Երբորում.

Բարեկամ.
Գեւա հրեք օր է, որ մի նամակ եմ ուղարկել
և ահա գրում եմ միւսը: Գուցէ այս անգամ
խիստ տխրացնեմ ձեզ. բայց, ինչ արած, իմ
մեղքս չէ, մենք այս բոլորը տեսնելով շատ ենք
արտասուել, մի քիչ էլ դու արտասուիր...

Երեկ էր այդ և այսօր, երեկ և սուսայ դէպի
սպանդանոց գնացողներին, այսօր էլ զօհներին:

Երեկ լցվեցին քաղաքի մէջ Մշի, Վանի, Խի-
զանի, Դառախի և Մոկսի կողմերից և Պոլսի
գնացող բազմաթիւ հայեր:

Այսօր էլ լցվեցան և Պոլսից եկող և հայրենիք
գնացող պանդուխտներ... բազմաթիւ պանդուխտ-
ներ...

Խաները (քարվանսարա) առաջնորդարանի առ-
ջև, եկեղեցու բազում, ուսումնարանի արտաքինոց-
ների առջև, եկեղեցու դրան առջև շարված, փո-
ղոցներում, ամեն մի դրան առջև, դառնում են
յարարներով ունեցող վաճառականների դրա-
սենեակներում լցվել և վրադառնալու նրանց
մանր տղաներով, իրանց կանանց հետ. գնում են
առողջ և դարձողները հիւանդ, գունաթափ, նի-
հարած և խրոտ պակասած կամ հրէշացած են:

Խաներում իջել են փոքր ինչ ճանապարհա-
ծախս ունեցողները, առաջնորդարանի մէջ նը-
րանք, որոնք զոհուած ինքն խաղողում մինչև հայ-
րենիք հասնելու, եկեղեցու բազում նրանք, ո-
րոնք հիւանդ են, ուսումնարանի արտաքինոցների
մօտ նրանք, որոնք փող չունեն և զիշերելու
տեղ, փողոցներում—հրէշացածները, դռների առ-
ջև—մարազոցները, առհասարակ նիւար, հիւանդ
կանայք, բռնած մի քանի նիւար և կմախք դար-

և մի լուսամուտ, որը գտնվում է դրան հանդի-
պակաց մասում աջ կամ ձախ պատի վերին ան-
կիւնում: Հնձանի յատակը և լուսամուտից սկսած
չորս կամ, աւելի ճիշդ ասած, երեք պատերն էլ
1—2 արշին բարձրութեամբ կառուցվում են ծե-
փած են: Յատակին թեք դիրք են տալիս, որպէս
զի շիրան հեշտութեամբ հասնի: Խաղողը ոչ թէ
դռնից են ներս ածում, այլ լուսամուտից: Լու-
սամուտի հանդիպակաց անկիւնում գտնվում է
մի ծոր 1/2 արշին բերանի տրամագծով և 1—1 1/2
արշին խորութեամբ. այդ ծորը կոչվում է տպի-
ճակ և դա նոյնպէս կառուցվում ծեփած է, թէ
յատակը և թէ կողքի մակարդակը: Տպիճակը
հաղորդակցում է մի այլ աւելի մեծ հորի հետ,
որը նոյնպէս կառուցվում ծեփած է, դա էլ կոչ-
վում է տաքար: Սովորաբար տաքարը զուգընթաց
պատճառով մի և նոյն հնձանում չէ լինում,
այլ նրան կից մի այլ հնձանում:

Այգիկութից մի երկու օր առաջ հնձանի բոլոր
կառուցվում են ծեփած մասերը. ճարպով են կամ
ճարպով և կամ մեղրամոմով, որը թէև շատ
թանկ է նստում, բայց գերադասելի է: Այդ նրա
համար են ճարպով, որ մի գուցէ կարծ ծծի և
կամ թէ չէ շիրան ծծի, որ կարգաված ճեղքերից:

Երբեմն խաղողը կտրում են ոչ թէ այդ նը-
կարագրած հնձանում կամ կառուց, ինչպէս տե-
ղացիք են ասում, այլ փայտից շինած տաշտի
մէջ, որի մի ճակատի ստորին մասում անցը է
թողած շիրայի համար:

Խնայէ վերին էլ ասեցի, խաղողը ներս են ա-
ծում լուսամուտից և երբ կառուց բաւականաչափ
խաղող է դիրվում, սկսում են տրորել կամ կղճո-
րել: Մշակները տրեխները կամ չտաքի հանում
են, որոնք լաւ մաքուր լուսամուտ և պարզաբն
էլ վեր քշում, վեր ծալում, ապա ոտներով
սկսում են կղճորել խաղողի ողկոյնները: Պէտք
է

ձած մերկ մանուկների ձեռքերից, վաճառական-
ների գրասենեակներում—փոքր ինչ փող աշխա-
տած և այդ փողը «փողոց»-ով (փողանակաղբի)
տուն ուղարկել ուղղունքը:

Քանի հասն են վերջիններս այդ ահապին բաղ-
մութեան մէջ—մատով կարելի է համարել:

Ձեզ և քոյրերի էլ յայտնի է թէ ինչ հանգա-
մանքներից ստիպված մշեցին, վանեցին և այլն
պանդուխտութեան է դիմում, թէ ինչպէս հարկե-
րը, վաշխառուն, աւաղանները, բոլորն էլ միա-
ցած հանում են նրանց իրանց երկրից և զլո-
րում են նրանց և Պոլսի—անդուշտը, ուր նրանք
թափախվում են տիգրիսի մէջ...

Հատ գրել են և միշտ էլ գրում են գնացողնե-
րի համար, բայց անհետաքրքրական չէ իմանալ
դարձողների մասին:

Գնում են հաղարաւոր, դառնում են հարկաւ-
որ, կէսից աւելի մեռնում, փչանում և յաւի-
տեան մնում են իրանց եղած տեղերում, կամ
իրանց կանանց անխնամ հայրենիքում թողնելով
և կամ նրանց քաշելով և իրանց մօտ տանելով:

Գնում են նրանց պարզ, անկեղծ, ոչինչ չէ
ստիպում նրանց ստախոսել, կեղծել, խաղա-
խել, անբարոյականաւ, փողի համար ամեն
ինչ ծախել, զգալ մի անամօթ արհամարհանք
դէպի հայրենիքը, նրա նուիրական իրերը, ա-
մուսնական անքնութիւնը, մայրենի լեզուն, իր
զրկական պարզութիւնը:

Եւ ահա մնում են այդ խեղճները և Պոլսի, Ե-
գիպտոս, Ամերիկա և յետ են դառնում ստախոս,
կեղծաւոր, խաղախ, անբարոյական, և ամեն
ինչ... մի խօսքով մի հրէշ դարձած: Եւ ունի
լաւ հաշուաւոր, ծոցում մի քանի ոսկի, ունի մի
քանի ընծաներ, հայաբառութեամբ հայրենիք
մտնում, սկսում է ծիծաղել իր հայրենիքի սովո-
րութիւնների վրա, կարծում է թէ ամեն ինչ նա-
խապաշարմունք է. կարծելով թէ հայրենիքի լե-
զուն կոչու է, նա «ջրածիկին»—«բերդ», կու-
ղամի պոչին մի «կուր», «նը կերթախ» պոչին
մի «նէ» է կպցնում, իր մայրենի լեզուն խառ-

խառ ուշադրութիւն դարձնել որ նախ կալը և
տաքարը լաւ մաքուր կերպով լուացած լինեն,
նոյնպէս և մշակների ոտները, որոնք չեն կարող
պարծենալ մաքրասիրութեան կողմից: Այնտե-
ղում, որտեղ շիրան թափվում է տպիճակի մէջ,
մի ցախակն *) են դնում, որպէս զի շիրայի
հետ գնացող գիւնները չը թափվեն տպիճակի
մէջ: Դարձեալ նոյն նպատակով, այսինքն, ամ-
բողջ մնացած գիւնները տպիճակի մէջ ընկնելը
արգելելու համար խաղողի կոյտի առաջին մա-
սում մի շերտ ողկոյններ անարատ են թողնում
սկզբում և չեն կղճորում, որը թէև ազատ կեր-
պով շիրային թող է տալիս անցնել, բայց գիւն-
ներին արդիւում է: Ստացած շիրան նախ թափ-
վում է տպիճակը, ապա այնտեղից էլ անցնում է
տաքարի մէջ: Երբեք խաղողի ողկոյնները բաւա-
կան ջարդված, տրորված են լինում: շիրան ա-
զատ կերպով չէ կարողանում հոսել—որովհետև
ջաջան արդիւում է, դրա համար երբեմն երբեմն
սկսում են կաղնում ջաջան աջ ու ձախ զցե-
լով:

Երբ արդէն խաղողի ողկոյնը բաւականաչափ
քամվում է շիրայից այն ժամանակ ստացած ջա-
ջան—որը ողկոյնի չանչիւրից և գիւնների կաշուց
է բաղկացած լինում, իրար վրա են կիտում և
արկի ձև են տալիս: Վերին կամ տախտակներ
են դնում և կամ մի դուռ, ապա տախտակնե-
րի կամ դրան վրա մեծ մեծ քարեր են դարձում
մեծ ճնշում ստանալու համար, որի աղբեղու-
թեան տակ դեռ գիւնների կաշու մէջ մնացած
շիրան մղվում է: Այդ գործողութեանը տեղացիք
տիրք դնել են ասում և ստացած շիրային և տեղը:
Եւ քոյր, ուրիշ խօսքով տիրք դնելուց ստացած

*) Գախակն նշանակում է ծառի ճիւղերից
չինած աւել:

նում է և Պոլսի լեզուի և տաճկերէնի հետ և
ահա երբ կամենում է ասել թէ «այսպէս գեղե-
ցիկ փողոցներ կան և Պոլսում»: ասում է «Ա-
սանկ խօրտ սօքաքներ կան Ստամբուլում կօր»:
(«Ասանկ» և Պոլսի, «խօրտ» հայրենիքի
«սօքաքներ» տաճկերէն բառեր են:

Մնում է հայրենիք, ծիծաղում է ամեն ինչի
վրա. նրա համար ծիծաղելի է իր նախկին խը-
ճիթը, իր մօր, հօր և կնոջ հաղաւտները, լե-
զուն, նա քիչ տակից ծիծաղում և միւս օրը իր
և Պոլսից եկած ընկերների հետ, երբ նստում
են գիւղի աղբիւրի մօտ, օղիի շիշերի առջև խա-
տառակ զէֆեր անելու, տաճկական երգերի մէջ
ծիծաղելով պատմում է, թէ ինչպէս իր ծնողնե-
րը ընկելու ժամանակ աղոթում են կանգնած և
սաղմոսներ են երգում...

Եւ այժմ չէ բաւականանում այլ ևս միայն իր
կնոջով, նրա աչքը միշտ օտար սիրուն կանանց
վրա է, նա, որ առաջ ուրիշ կնոջ երեւ չէր
նայում, այժմ խօսքեր է ձգում օտար կանանց, և
Պոլսից եկած իր ընկերակիցների հետ ամբողջ օրը
պարսպ փողոցներն է ման գալիս, քաղաք է զը-
նում օղի գնելու և անբարոյական կին փնտռե-
լու... նա խաղալու թողիւ է լեբել հետը և
քրքրիւ է արձակում, երբ իր ծերունի հայրը, ո-
րի առաջ նա համեստ խոնարհութիւն էր ցոյց
տալի, ասում է

—Ողբի, խաղալը վատ բան է, մի խաղալ...

—Պոռ, ասում է նա—ասանկ լաւ չը տեսած
մարդիկ ալ կըլլան մի... Եւ այլ ևս առ ոչինչ է
դրում իր մօր և քոյրերի դուրսդարանքը, նրանց
վրա ծիծաղում է, համոզում է որ ամեն մարդու
հետ խօսեն, մարդ տեսնելու ժամանակ չը թա-
գնվեն և երեսը բաց ման գան, ոչ թէ, որ այդ-
պէս լաւ է, այլ որովհետև և Պոլսում այդպէս
են անում...

Ուտում է իր բերած փողը, ուտում է իր ծե-
րունի հօր քրտիքը, և երբ զգում է պարագու-
թիւնից, որովհետև այդպէս ցած բաներ դործել
չէ ուղում, ծախում է հաղուստները, ժամացոյցը,

շիրան շատ պարզ է լինում և աւելի ղեղին
կարմրաւուն գոյնով: Դժբաղդաբար այգետէրերը
այդ շիրայի պարզութիւնից խաբվելով, խառնում
են սկզբում ստացած շիրայի հետ, որի հետեան-
քնն այն է լինում, որ գինին կոպտանում
կոպտանում է, այլ ևս չէ կարողանում իր նրու-
թիւնը ունենալ: Դրա պատճառն այն է, որ ող-
կոյնի չանչիւր բարձր ճնշման տակ արտադրում է
մեծ քանակութեամբ դառն և տոխ պատճառ, ո-
րոնք եթէ գինու մէջ մի որոշ չափից, որոշ քա-
նակութիւնից անցնում են, այն ժամանակ գինին
կոպտանում, կոպտանում է: Այդ է պատճառը,
որ այդ ետքի շիրան չը պիտի խառնել սկզբում
ստացած շիրայի հետ: Միւս կողմից էլ այգետե-
րերը այդպէս չեն վարվում, որովհետև իրանք
փոքրիկ կայաւածատներ են և ստացած ևս ունի
շիրան մեծ քանակութեամբ չէ լինում, որ կարո-
ղանան մի աման առանձնապէս նրա համար
պարագայներ: Բայց խորհուրդ ենք տալիս մեծ
կայաւածատներին, կամ մեծ քանակութեամբ
գինի պատրաստողներին, որ ետքի շիրան չը
խառնեն սկզբում ստացած շիրայի հետ:

Եւրոպայում, ուրիշ խօսքով այն տեղերում, որ-
տեղ գինեգործութիւնը դարգացած է, խաղողից
շիրա ստանալու համար այլ կերպ են վարվում:
Այնտեղ գործ են ածում ջարդող, ջարդող—չան-
չահան անող մեքենաներ և ապա պրիստուրներ:
Պէտք է ասել, որ ոտով կղճորելը շատ լաւ է և
գերադասելի է միւսներից, բայց համեմատաբար
թանկ է նստում և շատ ժամանակ խլում:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՄՈՋԻՈՎԻՑ

Հոկտեմբերի 2-ին

Անպատեմբերի 28-ին. Եկաւ այստեղ ս. առաջ-

մի քանի օր էլ օղիով զէֆ է անում... ցետոյ
դնում է քաղաք, իր հողի մի կտորը նորէն գրաւ
է գնում, մի քանի ոսկի առնում և որպէս թէ
դժոխքից ազատված՝ նորից ցուպը ձեռք է առ-
նում...

Գնում է և Պոլսի, որին երկինք էր բարձրաց-
նում իր հայրենիքի մէջ. գնում նորից դառնում է իր
դահլէճի և ասիկի (ստորճի պարագաներ),
նորից դառնում է իր գինեմոսները, իր պոռնիկները,
իր ընկերները... մոռանում է հօրը, մօրը, կնոջը
և որդիքը... նա համարձակվում է իսկ տաշխու,
երբ նրան ասում են, որ նա հայր, մայր ունեյր
հայրենիքում և ամուսնացած էր...

Հարկերը 50—60-ը գնում են, 30-ը մնում և
30-ը այսպէս հրէշացած զալին անցնում են ի-
րանց հայրենիքը, որտեղից նրանք մի քանի ամ-
սից ցետոյ վերադառնում են մի քանի միամիտ
խեղճ երիտասարդներին ևս հետեւն առած...

Որ մէկը վրա ցաւեւ, գնացողներին, թէ ետ
դարձողներին... Գնացողներին—նրանց գոնէ համո-
ղելով կարելի է ետ դարձնել, իսկ դարձողներին—
մի րօպէ մինչև անգամ կարծում են, որ պէտք է
աշխատել չը թողնելու, որ հայրենիքի հողի վրա
իսկ ոտ կոխեն այդպիսիները...

Ի դէպ կարելի է տպագրել տալ, եթէ քեզ
ուղարկեմ մի վէպ, և որը կարդալով պիտի ամեն
ինչ իմանաւ, պիտի լաւ դառնապէս:

Միտքս այժմ բոլորովին այդ խեղճ պանդուխտ-
ների կողմն է: Ինչ ողորմելի դրութիւն: Երևա-
կայի: Առաջնորդարանից անցեալ օրը հրամա-
նիցին ախոռից դուրս ձգել մի պանդուխտ ըն-
տանիք, որոնք փող և տեղ չունէին և որոնց
ուսուցիչները թնայելով, այդտեղն էին տուել դի-
չերելու:

Բարեկամ, այս կը լինի իմ վերջին նամակը
Երբորումից: Վան պէտք է գնամ. կը գրեմ վա-
նից:

Ուրեմն ցորութիւն

Ապրօ

նորը Գեորգեայի Կոնստանտին, որի ընդունելությունը բաժանման փառաբան էր: Արքայազնին հիւրասիրեց իր տանը՝ տեղիս վաճառական Մակար Ուլուխանով: Այստեղի հայոց երկսեռ դպրոցի հոգաբարձու թիմին՝ սրբազանի գալուստից մի քանի օր առաջ, ժողովեց ցրված աշակերտուհիներին և աշակերտներին, և մի քանի նոր սաներ ևս չնորհ արաւ ընդունելու, այնպէս որ սրբազանը գալով՝ դռան աշակերտներին իրանց ցաւով պէտք է ասած, որ անցեալ տարվայ սաների մեծ մասը՝ արդէն մտել էին տեղիս քաղաքային երկսեռ դպրոցները, և մի քանիսը վաճառականներին մօտ:

Սրբազանը իր գալուստը երկրորդ օրը այցելեց հայոց երկսեռ դպրոցները, աշակերտուհիներին և աշակերտներին հարցաքննելով՝ շատ անբաւական մնաց, որովհետեւ թէ լեզուներէն և թէ առարկաներէն, շատ թույլ էին: Բայց դպրոցական վարչութիւնը, սրբազանի առաջ իրան արգարացնելու համար, ամբողջ մեղքը անցեալ տարվայ ուսուցչական խմբի վրա բարդեց, որովհետեւ բոլորքեան բացակայ էին: Գետոյ քաղաքագլխի օգնականի առաջարկութեամբ առաջնորդը այցելեց տեղիս քաղաքային պետական երկսեռ դպրոցներն և աշակերտներին հարցաքննելով՝ հայոց լեզուից և կրօնից: Փաղաքային դպրոցի ուսուցիչը բարեկամութեամբ և աստատուած:

Սրբազանը դպրոցները այցելելուց յետոյ՝ այնուհետեւ սկսեց դպրոցական և եկեղեցական գործերը քննութեան առնել: Եւ դպրոցական գործերը քննելուց ետեւ, իրեն թէ ամբողջ ուսումնական տարվայ մէջ ոչ մի ուսուցչական ժողով չէ եղել, և ոչ մի արձանագրութիւն չէ կազմվել: Բայց մեզ քաջ յայտնի է, որ քանի քանի անգամ ուսուցչական ժողովներ եղան և արձանագրութիւններ գրվեցան, սակայն հոգաբարձութեան նախագահը, որը նոյն դպրոցներում կրօնուսուցիչ է, իրան ձեռնադրու չը լինելու պատճառով, երբ սրբազանը պահանջեց, նա երևան չը հանեց՝ ոչ արձանագրութիւնները, ոչ դասարանների ցուցակները, և ոչ էլ հարցաքննական ցուցակները:

Եկեղեցական գործերը քննելու, դարձեալ բարեկարգելու մեղաւորը դուրս եկաւ, և այդ պատճառով սրբազանը հրամայեց նրան, որ իր հրաժարականը՝ ներկայացնել կոնսիստորիային: Եւ արդէն օրը, Գեորգեայի տոնին, սրբազանը պատարագ արեց և տեղիս դերեզմանատան նոր վերանորոգված ս. Գեորգի եկեղեցին օծեց: Իսկ երկուշաբթի առաւօտեան վաղ հեռացաւ Սօղո-կից և զնաց Գեորգիեմիս քաղաքը:

Տ—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի գումայի հոկտեմբերի 9-ին կայանալի նիստի պարագային թուով դրված է և հետեւեալը. «Բարձրագոյն հրամանի գործութեամբ՝ Թիֆլիսի նահանգապետի առաջարկութեամբ՝ զըրկելու ձայնաւորի իրաւունքից լիւսան Կ. Բէհրու-թեանին և պ. Միքայել Թամաշեանին»:

Հիւսիս-Արեւմտեան Մեծ գրում են. «Այստեղ աւազակները դադարել են ղեղերնը ծածուկ դողովելու անելուց, իսկ հիմա նրանք բացարձակ և ցերեկով ոչ թէ միայն դողովել են, այլ ուղղակի յափշտակութիւններ են անում»:

Մեզ գրում են որ Հին-Նախիջևանի հասարակական կիսանքը կատարեալ մեղման լինելու մէջ է գտնվում, ամեն մարդ միմիայն իր անձնական գործով է զբաղված, իսկ թատրոնական գործը և ընթերցարանը կատարելապէս արհամարհված են:

Եւրոպական Ռուսաստանի նահանգներին մեծ մասամբ այս տարի հունիսը սովորականից վատ է եղել: Լորդերներին ասելով գիւղացին ոչ թէ միայն ասելովը ցորեն չունի ծախելու համար, այլ ինքն էլ, շատ նահանգներում, ստիպված է իր գործածութեան համար ուրիշ տեղից գնել ցորենը: Հետեւանքները արդէն այժմ երևում են, աշնան մանր տոնավաճառներում գիւղացիները չափազանց է ծանցելով են ծախում երկրագործական անասուններ, ինչպէս տաւար, ձի և այլն: Եւ շատ տեղ ցանքի համար էլ սերմացու հացահատիկներ չեն մնացել գիւղացիներին մօտ:

Մեզ գրում են ՄՍՍԿՎԱՅԻՑ հետեւեալը. «Այստեղի Պետրոսի ձեռնարկով կողմից երկրագործական ճեմարան մտնողներին թիւը այս տարի շատ պակաս է անցեալ տարիներին մտնողներին թիւից: Գրա պատճառն այն է, որ այս տարի հրեաները բնակական դպրոցի ուսումնական տարածքները պէտք է ակադեմիա մտնելուց առաջ դեռ մի քանի ամիս մի որ և է կալուածում գործնական գիւղատնտեսութեամբ պարապելու: Բնակական դպրոցում աւարտողը պէտք է ինքն մի որ և է կալուած գտնի, որի տեղը համաձայնի թողնել անփորձ բնակատիր իր կալուածում պարապելու: Հայերից միայն մի հոգի ուսանող է մտել այս տարի Պետրոսի ձեռնարկով, մի երկու հոգի էլ որպէս ազատ ունկնդիրներ»:

ԱՄԱՆԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի հայտարար դատաւոր Նազիմով անձնասպանութիւն գործելու դիմումը բնակութեւն է արձակում՝ աջ աչքի վրա, սակայն նպատակին չէ հասնում. բժիշկները թէպէտ գնտակել հասնում են, սակայն դատաւորի երկու աչքերն էլ կուրացել են: Կենդանի մնալու յոյս քիչ կայ, թէ ևս այժմ կարողանում է խօսել»:

Հետեւեալ տեղեկութիւններն են հաղորդում մեզ ՊԱՆԱՅԻՑ: «Մեր գիւղի բնակիչները, երբ գաւառապետ պ. Սուչիւսի Մեղրի էր գնացել, խնդրել են բնակչական հրահանգներ, աւազակներից պաշտպանվելու. գաւառապետը թէ ևս խոստացել էր, բայց վերջում մերժեց: Բայց և այնպէս գաւառապետը խոստացաւ մի կերպ օգնելու: Եւ գործից, որովհետեւ ժողովուրդը սարսափի մէջ է և պաշտպանվելու համար զէնքի կարողութիւն ունի: Ինչպէս երևում է պ. Սուչիւսի մի քանի գիւղերին բաժանել է հրահանգներ յիշեալ տեսակից: Մի քանի աւազակներու մարդիկ էլ, եւ զամ աւազակներից, սիրտ առնելով, սկսել են փոստերի վրա յարձակվել. այդպիսի մի խումբ կայ Օրդուբաթի շրջակայքում»:

ՔՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Անցեալ տեղեկութիւնների 29-ին, տեղական թատրոնատէրների խումբը մի հայերէն ներկայացում տուեց. խաղացին՝ «Այ քեզ օյն», «Խէչօի թողը» և «Երկու քաղցածներ» վերջինները, որոնք շատ աւելի անցան, իրանց դերերի մէջ լաւ էին պ. պ. Մարտինանց, Սաղաթելեանց և Սեւանց: Անտարակներում խումբը երգում էր դաշնամուրի ներդաշնակութեամբ աղջկային երգեր: Ինչպէս լուսում ենք, պ. Մարտինանց աշխատում է պատրաստել նոյն սիրողներին ներկայացնելու «Արդաշանաց պատերազմ» ողբերգութիւնը: Յանկանում ենք կատարեալ աշխատելու և յոյս ունենք, որ Գուրմայիսի հայ հասարակութիւնը անտարբեր չի մնալ զէպի հայերէն ներկայացումների գործը»:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարի 28-ին այստեղ եկաւ Շամալու թիւի առաջնորդ, Մեսրոպը արքեպիսկոպոս Սմբատեանց, հասարակութիւնը նրան լուս ընդունեց: Չէր զլացել նոյն իսկ գաւառապետ պ. Սոսոյչ: Զանկայի սրբազանին դիմաւորելու համար պաշտօնականները մէկին ուղարկելու կողմնակից էին: Բայց հայ երիտասարդների թիւը 26-ի էր հասնում, որոնք ձեռնարկված 43 վերստ հեռու մինչև Դաւաչի կայարանը գնացել էին հանդիպելու սրբազանին: Հետեւեալ օրը սրբազանը այցելութիւններ արեց տեղիս գաւառապետին, հայտարար դատաւորին, և այլ մի քանի անձանց մօտ, որոնք փոխադարձաբար իրանց այցելութիւնները տուին սրբազանին: Կիրակի, Վարազդայ խաչի տօնին, սրբազանը հայոց եկեղեցում առաւօտեան և կէսօրվայ պատարագին քարոզ արեց՝ նկարագրելով և այդ տօնի նշանակութիւնը և բացատրելով իր գալուստը: Եւ միայն ձեռնարկներ չի արեց, այլ իր անձնական վերանորոգութեան համար դրամները միմիայն, օգնութիւն է հարկուոր: Սրբազանը գիւղացի ժողովուրդին հրաւիրելու, որ այդ մասին հոգաւ և Վուրան, երբ կառավարիկն նրան առանձին մատենաւ փողեր հանգանակելու յիշեալ նպատակի օգտին: Հոկտեմբերի 2-ին, սրբազանը զնաց Խաչմազ գիւղը, ուր այս օրերս սպասում են Շամալու՝ սպանված քահանայի փոխարէն: Նոր քահանայ, և միւս օրը վերադարձաւ Ղուրա: Այդ հոկտեմբերի 4-ին սրբազանը ձանապարհ է ընկնում զէպի (Կերեմտ), որտեղից դարձեալ գալու է, ինչպէս հաւատացնում են, Ղուրա՝ Բագու անցնելու համար»:

որտեղից դարձեալ գալու է, ինչպէս հաւատացնում են, Ղուրա՝ Բագու անցնելու համար»:

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Անցեալ տարի 17-ին այստեղ եկաւ Չանդեղուրի գաւառապետ պ. Սուչիւսի իր երկու պրիստաշներով: Պ. Սուչիւսի իր նշանակված գաւառապետ և, ինչպէս երևում է, մի խնացի մարդ է: Ամիս 18-ին հանդիսաւոր տօն լինելով, գաւառապետը ցանկութիւն յայտնեց ուսումնարան և եկեղեցի գնալու: Նախ յայտնեց ուսումնարանի վարչութեանը, որ ցանկանում է տեսնել ամեն բաժանմունքների աշակերտներին՝ հարց ու փորձի համար: Ուստի ուսուցիչները ժողովեցին աշակերտներին ուսումնարան: Ուսումնարանի բակը դիտելուց յետոյ պ. Սուչիւսի մտաւ դասարանները՝ իր օգնականներով, որոնց հետ և շատերը ժողովրդից: Բոլոր սենեակները լաւ նայելուց յետոյ, սկսեց հարց ու փորձ անել աշակերտներին: Նա գոհ մնաց, խրախուսեց ժողովուրդին որ ուսումնարանը հաստատուն պահեն, եկամուտները շատացնելով: Ապա գովեց ուսումնարանի տեղը, և ասեց, որ աւելի լաւ կը լինէր եթէ շինութիւնը աւարտէր: Այդտեղից գնաց եկեղեցի ս. պատարագին ներկայ գտնվելու: 15 րոպէ մնալուց յետոյ, այցելեց փողոցները և հրահարակը: Պ. Սուչիւսի յայտնեց մնաց երեք օր, և յայտնեց, որ ինքը մտաւանջութեան մէջ է Չանդեղուրում երեք օր անգամ աւազակների պատճառով, մանաւանդ որ մի քանի չարախ՝ առաջ սպանել էին մի կողմից և այս քանի օրերս էլ կողպուել էին մի պրիստաշին: Այժմ նրա զխաւոր աշխատութիւնն է Սիւնիսում գտնվող աւազակներին կալանաւորելու, այդ նպատակի համար պահանջել է կառավարութիւնից զինուորներ: Անցեալ տարի 19-ին նա գնաց Գորիս»:

ԱՄԱՆԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր դպրոցները խաղաղութեամբ բացվեցան. ցանկանում ենք, որ նոր տեսուչ պ. Սո. Մախաբեան, կարողանայ դպրոցների գործը աշխուժեցնել առաջ տանել ուսուցչական խմբի ևս միտանք: Գաւառից Եւրոպայի վարդապետի գալով յուսանք որ մեր հոգեւոր կառավարութեան գործերը կարգի կը բերվեն և դպրոցների հոգաբարձութիւնը կուսնենայ կանոնաւոր ղեկավարութիւն: Բարեգործական ընկերութեան ճիւղը նման է, ընթերցարանի բացվելու հաստատութիւնը դեռ չէ ստացվել: Աղքատների թիւը շատացել է, խնամակալութիւնը չունենք: Փաղաքի և գիւղերի չորրորդանիւնների մէջ տարածված է արարափոխիկ հիւանդութիւնը: Փաղաքի անմաքութիւնը կրկին կենտրոնանում է Մարտաշայ ձորակում, մինչև անգամ նշանակութիւն չունեցաւ դոմայի պարտաւորեցուցիչ որոշումը՝ մաքրութեան մասին, որովհետեւ կարգադրող և վերահսկող չունենք»:

Մեզ ինչպէս են տպագրել հետեւեալը. «Մեր կարծում էինք որ գործակատարները կարողանալով իրական օրերը ազատ լինել՝ կաշխատեն իրանց ձեռք բերած ժամանակը դուր չը վատնել, և այն ծրագրներն ու մտածութիւնները, որ ունենին, որ առաջ կը սկսեն իրագործել, ինչպէս օրինակ հիմնել ընթերցարան-գրադարան, գոնէ երկուշաբթի մի անգամ ժողովել միասին, խօսել գործակատարների և բանավարձների յարաբերութիւնների մասին, և զործակատարների պարտաւորութիւնների, նրանց գիրքը բարձրացնելու մասին, և այն: Բայց ինչպէս երևում է, երիտասարդ գործակատարները, տեսնելով որ իրանց իրանք ազատ են, սկսեցին ողբերգութեամբ խօսում էին, բայց մի քանի օրից յետոյ, հայերիս սովորութեան համեմատ, ամեն ինչ սառեց ու դադարեց: Մեզ իրաւունք ենք համարում այսպէս ասել այն պատճառով, որ մի քանի անգամ մտածել են ժողով գումարել կարեւոր գործերի մասին խօսելու, բայց ոչ ոք չէ եկել նշանակված տեղը: Հարկ ենք համարում յիշել այստեղ, որ անցեալները գործակատարները ժողովեցան և տաք տաք խօսելուց յետոյ վճռեցին յայտնող կերակրի էլ ժողովել և խօսել գրադարան-ընթերցարանի մասին, բայց մինչև օրս այդ ժողովը չէ կայացել: Թէ ինչ են անում կիրակի օրը գործակատարները՝ դժուար է բացատրել... Այնքան եռանդով գործը սկսելուց յետոյ, այսպէս սառել վերաբերվել զէպի նա՝ լաւ նշան չէ: Հարկաւոր է ժողովել, խօսել, նիւթական դիտողութիւն անել, բանալ ընթերցարան-գրադարան, հաստատել գոր-

ծակատարների խնայողական կասսա, և այսպիսով ցոյց տալ, որ գործակատարներն էլ զինքն մտածել, ժամանակից օգտվել և գործ չինել»:

ԲԱՅՈՒՅԻՑ մի քանի յօդուածներ ստացանք, որոնք նուիրված են հանգուցեալ վարժուհի տիկին Վարդուհի Ռաֆայելեանի օրինակելի և բեղմնաւոր դպրոցական գործունէութեանը: Հարկաւոր ենք համարում այդ յօդուածները վերցնելով տպագրել հետեւալը. «Հանգուցեալի սիրած հարցերից մէկն էլ կանանց հարցն էր, որի համար եռանդուն կերպով նա գործում էր, չը խնայելով զրա համար իր մտաւոր ամբողջ ոյժերը: «Մշակի» այդ պաշտպանած հարցը նրա սրտի մօտիկ հարցն էր, որին տարիների ընթացքում պաշտպանել է կրելով մեծ զրկանքներ: Նա կանանց ազատութեան հարցը գտնում էր նրանք ինքնագոյնութեան մէջ, կանանց անկախ աշխատանքի մէջ: Եւ մինչև կանանց վերջին էլ հանգուցեալը ապրում էր իր աշխատանքով: Վերջին ժամանակներս Բագուի մէջ ծագած կանանց ընկերութեան գործում ջերմութեամբ գործիչներից մէկն էր տիկին Ռաֆայելեան. նրա մասով ընկերութիւնը զրկվում է իր օգտաւէտ անդամների մէկից: Նա այդ ընկերութեան մտքով այնքան էր ուրախացած, որ չը նայելով իր սուղ միջոցներին, մի հարկուր բուրլի էր նուիրել նրան: Եւ այդպիսով նա սիրում էր ընկերութիւնը ոչ միայն խօսքով, այլ և գործով: Հանգուցեալը չէր մոռանում նմանապէս իր ուժերից մասն հանել մի չքաւոր օրիորդի համար, որը ուսանում է Թիֆլիսի իգական գիմնազիայում: Առհասարակ հանգուցեալը այնքան անձնուէր էր, և այնքան համակրելի իր համոզմունքներով, որ նրա մասը շատ զգալի է մանաւանդ Բագուում, Վերին-Աղուլիսում և Հին-Նախիջևանում, որտեղ նա գործել է զըրկողներում: Հոկտեմբերի 8-ին Բագուի դպրոցների ուսուցիչները հոգեհանդիստ կատարեցին նրա համար: Ներկայ էին աշակերտուհիները և աշակերտները իրանց ուսուցիչներով և վարժուհիներով և մեծ բազմութիւն ժողովրդի: Թէ տղաներ կարկանդակ և թէ կանանց: Պատարագիչ հայրն էլ քարոզ խօսեց ծանօթանցնելով հանգուցեալի անձնատուրութեան հետ: Գաղաղի վրա պսակներ կային աշակերտուհիներից և ուսուցչական խմբից, և երկու ուրիշներ էլ մէկը Վերին-Աղուլիսի նախկին աշակերտուհիներից, իսկ միւսը Վերին-Աղուլիսի նախկին ուսուցչական խմբի կողմից: Վերին-Աղուլիսից էլ մեզ գրում են. «Հոկտեմբերի 1-ին պատարագից յետոյ, ներկայութեամբ ուսուցչական խմբի, աշակերտների, աշակերտուհիների և մեծ բազմութեան ժամաւորների՝ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ վարժուհի տիկին Վարդուհի Ռաֆայելեանի յիշատակին: Հոգեհանգստից առաջ Աղուլիսեանց եպիսկոպոսը դառնալով հասարակութեան, ցաւ յայտնեց մի այդ տեսակ կորստի մասին: Նրանից յետոյ աւագ ուսուցիչ պ. Միքայելեան մի ծառով հաղորդեց հանգուցեալի կենքից: Մի քանի տեղեկութիւններ: Սրբազանի վրա դրած էին 14 զանազան մեծութեան պսակներ և շատ փունջեր ընկեր-բարեկամներից, նախկին և նոր աշակերտներից, տիկինների կողմից և այլն: Հաւաքսուքի միջի այլոց յայտնեց, որ բացվելու է տիկին Վարդուհի Ռաֆայելեանի անուամբ տիկինների գրադարան, որի համար 10 րոպէի մէջ ժողովել է ուսուցչական նուէրներ 40 ր. բացել հանգուցեալի քրոջ տուած 30 րուբլին: Այդ գործին համակրողները իրանց նուէրները կարող են ուղարկել Աղուլիս, ուսուցչական խմբի անունով»:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Այգեկութիւնը արդէն վաղուց սկսված է և շուտով ամեն տեղ կը վերջանայ: Խաղողի պահածութեան պատճառով, այդ բերքը շատ թանկ է. խաղաղը 30—33 րուբլի արժէ: Այգեկները իրանց համար այս տարի չափից դուրս անաջող տարի են համարում. 30 կարասանոց այգի տալիս է 3—5 կարաս, 150 կարասանոց՝ 20—25 կարաս: Ետեւեւեւերից վնասով են. երևակայեցէք այգեկները զրոյթիւնը, որը իր յօսը այդու բերքի վրա էր դրել: Առանձին նորութիւն չը կայ: Յորենք 30—31 րուբլի է ծախվում, ալիւր՝ 35—38 րուբլի»:

Խնդրում ենք դարձեալ մեր բաժանորդներին ուղարկել «Մշակի» խմբագրութեանը թէ անցեալ և թէ ներկայ տարվայ ազատիկ մնացած բաժանորդագները:

Типографія Канцелярії Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. уѣд. д. вѣз.